ՆԱԽԱԳԻԾ

Կ-274-28.02.2018-ՊԻՄԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 1-ին հոդվածի 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով» բառերը փոխարինել ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 8-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3. Յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ որպես իրավական փաստարկ իրավունք ունի վկայակոչելու նույնանման փաստերով այլ գործով Հայաստանի Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտում առկա օրենքի եւ այլ նորմատիվ իրավական ակտի մեկնաբանությունները: Դատարանն անդրադառնում է նման իրավական փաստարկներին:

4. Նույնանման փաստերով այլ գործով Վճռաբեկ դատարանի կողմից իրավական նորմի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանության դեպքում դատարանը պետք է հիմնավորի օրենքի եւ այլ նորմատիվ իրավական ակտի՝ Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունից շեղվելը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 15-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 15. Քրեական դատավարության լեզուն

1. Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարության լեզուն հայերենն է:

2. Քրեական դատավարությանը մասնակցող անձինք, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովում են հայերեն թարգմանությունը: Քրեական դատավարությանը մասնակցող մեղադրյալին, եթե նա չի տիրապետում հայերենին, դատարանը պարտավոր է պետական միջոցների հաշվին ապահովել թարգմանչի ծառայություններով, բացառությամբ երբ մեղադրյալը ցանկանում է իր հաշվին ապահովել թարգմանությունը:

3. Քրեական դատավարության մասնակցին (բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի) նրա նախաձեռնությամբ նշանակված փորձագետին, նրա միջնորդությամբ հրավիրված մասնագետին կամ վկային դատարանը պետական միջոցների հաշվին ապահովում է թարգմանչի ծառայություններով, եթե համապատասխան անձը չի տիրապետում հայերենին, եւ անձն ապացուցում է, որ բավարար միջոցներ չունի վճարովի թարգմանություն ապահովելու համար:

4. Քրեական դատավարությանը մասնակցող անձինք (բացառությամբ՝ վկայի) դատավարական բոլոր փաստաթղթերը ներկայացնում են հայերեն կամ այլ լեզվով՝ հայերեն պատշաճ թարգմանությամբ: Նշված պահանջը չպահպանելու դեպքում դատավարական փաստաթղթերը քրեական վարույթն իրականացնող մարմինը չի քննարկում կամ չի թույլատրում, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց:

5. Լսողական կամ խոսակցական սահմանափակումներ ունեցող անձինք, սույն հոդվածի դրույթներին համապատասխան, ապահովվում են գործի նյութերին ծանոթանալու, սույն օրենսգրքով սահմանված այլ իրավունքներից օգտվելու եւ պարտականություններ կրելու հնարավորությամբ՝ սուրդոթարգմանչի միջոցով:

Comment [cu1]: Քրեական գործով վարույթում, օրինակ, տուժողի վրա սեփական միջոցներով թարգմանիչ ներգրավելու պարտականություն դնելը, կարծում ենք, որևէ կերպ արդարացված չի կարող լինել հարային իրավահարաբերությունների այս ոլորտում, երբ գործի հանգամանքների, բազմակողմանի և օբյեկտիվ քննության պահանջը դրված է հանրային մարմինների վրա

Comment [cu2]: Փաստորեն ստացվում է, որ նոր հանգամանքի հիմքով բողոք ներկայացնելիս, երբ հիմքը ՄԻԵԴ վճռն է, անձը պետք է ինքը թարգանի այն???արդարադատության մատչելիության սահմանափակում է

6. Քրեական դատավարությանը մասնակցող՝ տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի համար դատավարական փաստաթղթերի եւ դատական ակտերի հասանելիությունն ապահովվում է օգնականի միջոցով՝ պետական միջոցների հաշվին::

7. Հայաստանի Հանրապետության հաշվին թարգմանչի ծառայություններ մատուցելու անհրաժեշտություն առաջանալիս սույն հոդվածի 2-րդ, 3-րդ, 5-րդ եւ 6-րդ մասերով նախատեսված դեպքերում քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա թարգմանիչ, սուրդոթարգմանիչ կամ օգնական նշանակելու կարգը, թարգմանչի, սուրդոթարգմանչի կամ օգնականի վարձատրության չափը եւ կարգը սահմանվում են Կառավարության որոշմամբ:»:

Հոդված 4. Օրենսգրքի 16-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 16. Դատական վարույթի հրապարակայնությունը

1. Դատարանում գործը քննվում է դռնբաց դատական նիստում:

2. Քրեական դատավարությանը մասնակցող անձանց մասնավոր կյանքի, պատվի եւ արժանապատվության, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաեւ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության, վարույթի մասնակիցների կամ նրանց մերձավոր ազգականների պաշտպանության նպատակով դատարանը դատավարության մասնակիցների միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ գործը կամ դրա մի մասը կարող է քննել դռնփակ դատական նիստում: Դատարանը դռնփակ դատական նիստում քննություն իրականացնում է նաեւ սույն օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:

3. Եթե դատարանի որոշմամբ լրատվական գործունեություն իրականացնողին կամ լրագրողին պարտադրվում է բացահայտել տեղեկատվության աղբյուրը, ապա լրատվական գործունեություն իրականացնողի կամ լրագրողի միջնորդությամբ դատական քննությունն իրականացվում է դռնփակ:

4. Գործը կամ դրա մի մասը դռնփակ նիստում քննելու հարցը լուծվում է դռնփակ:

5. Գործը կամ դրա մի մասը դռնփակ նիստում քննելու մասին դատարանը կայացնում է որոշում:

6. Դռնփակ դատական նիստում գործի քննությունն իրականացվում է սույն օրենսգրքով սահմանված կանոնների պահպանմամբ: Գործը կամ դրա մի մասը դռնփակ նիստում քննելու դեպքում դատական նիստին իրավունք ունեն ներկա լինելու դատական նիստերի քարտուղարը, դատական կարգադրիչները, դատավարության մասնակիցները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ընթերական, թարգմանիչը, մասնագետը, փորձագետը եւ վկան: Նշված անձինք դատարանի կողմից ստորագրություն վերցնելու միջոցով նախազգուշացվում են օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունները հրապարակելու եւ սահմանված կարգի խախտմամբ օգտագործելու համար պատասխանատվության մասին:

7. Գործը կամ դրա մասը դռնփակ նիստում քննելու դեպքում հրապարակվում են դատական ակտի եզրափակիչ մասը, բացառությամբ այն դեպքերի, երբ այն պարունակում է օրենքով պահպանվող գաղտնիք: Դատական ակտի՝ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող մասերը, ինչպես նաեւ այն մասերը, որոնք հիմք են հանդիսացել դռնփակ դատական քննություն անցկացնելու համար, հրապարակվում են դռնփակ նիստում:

8. Գործը կամ դրա մի մասը դատարանի որոշմամբ դռնփակ նիստում քննելու դեպքում տվյալ գործի հետագա քննությունն այլ դատական ատյաններում կատարվում է դռնփակ:»:

Հոդված 5. Օրենսգրքի 39-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«5. Վճռաբեկ դատարանում վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը քննվում է Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ: Վճռաբեկ բողոքը համարվում է վարույթ ընդունված, եթե դրան կողմ է քվեարկել վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորների մեծամասնությունը: Վարույթ ընդունված վճռաբեկ բողոքները վճռաբեկ դատարանը քննում է կոլեգիալ՝ վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորների մեծամասնությամբ:»:

Comment [cu3]: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն՝ տեսողական սահմանափակումները պաշտպանի պարտադիր մասնակցության հիմք են, արդյոք այս պարագայում լրացուցիչ այս կարգավորումը նախատեսելու անհրաժեշտություն կար

Հոդված 6. Օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Դատավորի ինքնաբացարկի հիմքերը սահմանվում են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով:»:

Հոդված 7. Օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Կալանավորումը եւ դրա այլընտրանքային խափանման միջոցը մեղադրյալի նկատմամբ կարող են կիրառվել միայն այն դեպքում, երբ կան բավարար հիմքեր ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել սույն հոդվածի առաջին մասով նախատեսված գործողություններ եւ կան հիմնավոր կասկածներ, որ նա կատարել է այնպիսի հանցանք, որի համար նախատեսվող ազատազրկման ձեւով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է: Եթե մեղադրյալին վերագրվող հանցանքի համար ազատազրկման ձեւով պատիժ նախատեսված չէ կամ ազատազրկման ձեւով պատիժը չի գերազանցում մեկ տարին, ապա կալանքը կարող է կիրառվել միայն մեղադրյալի կողմից իր նկատմամբ կիրառված այլ խափանման միջոցի պայմանները խախտելու դեպքում:»:

Հոդված 8. Օրենսգրքի 361^1 -ին հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 361^1 . Դատարանում գործը կոլեգիալ կազմով քննելիս դատական ակտ կայացնելը

1. Դատարանում գործը կոլեգիալ կազմով քննելիս դատավորների խորհրդակցության ժամանակ խորհրդակցական սենյակում կարող են գտնվել միայն տվյալ գործով դատարանի կազմում ընդգրկված դատավորները: Այլ անձանց ներկայությունն արգելվում է: Դատավորներն իրավունք չունեն հրապարակելու խորհրդակցության ժամանակ արտահայտված կարծիքները:

2. Նախագահողը հարցերը դատարանի լուծմանն է դնում սույն օրենսգրքի 360-րդ եւ 361-րդ հոդվածներով նշված հաջորդականությամբ:

3. Յուրաքանչյուր հարցին դատավորներից յուրաքանչյուրը պետք է դրական կամ բացասական պատասխան տա: Դատավորներն իրավունք չունեն ձեռնպահ մնալու քվեարկությունից:

4. Սույն օրենսգրքի 360-րդ հոդվածում նշված յուրաքանչյուր հարցով առաջին հերթին քվեարկության է դրվում այն առաջարկը, որն առավել բարենպաստ է ամբաստանյալի համար:

5. Դատական ակտն ամբողջությամբ եւ դրա յուրաքանչյուր էջը պետք է ստորագրեն բոլոր դատավորները: Մեծամասնության կարծիքի հետ չհամաձայնվող դատավորի հատուկ կարծիք ունենալու մասին նրա ստորագրությամբ նշում է կատարվում դատական ակտում: Հատուկ կարծիքն այն ներկայացրած դատավորի ստորագրությամբ կցվում է դատական ակտին:

6. Հատուկ կարծիքը կարող է վերաբերել դատական ակտի ինչպես պատճառաբանական, այնպես էլ եզրափակիչ մասին:

7. Հատուկ կարծիքը հրապարակվում է դատական ակտի հետ միաժամանակ:»:

Հոդված 9. Օրենսգրքի 381-րդ հոդվածի 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 10. Օրենսգրքի 405-րդ հոդվածից հանել «՝ նախագահի եւ առնվազն երեք դատավորի կազմով» բառերը:

Հոդված 11. Օրենսգրքի 407-րդ հոդվածի 2.2-րդ եւ 2.3-րդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ.

«2.2. Վճռաբեկ բողոքը սույն օրենսգրքի 414.2 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով ներկայացնելու դեպքում բողոքը բերած անձը պետք է հիմնավորի, որ դրա վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի եւ այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, մասնավորապես վճռաբեկ բողոքում հիմնավորելով, որ՝

1) առնվազն մեկ այլ գործով ստորադաս դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտում միեւնույն նորմը կիրառվել է կամ չի կիրառվել հակասող մեկնաբանությամբ՝ կցելով այդ գործով դատական ակտը եւ մեջբերելով դրա հակասող մասերը՝ կատարելով համեմատական վերլուծություն՝ բողոքարկվող դատական ակտի եւ նույնանման փաստական հանգամանքներով մեկ այլ գործով ստորադաս դատարանի դատական ակտի միեւնույն նորմի՝ իրար հակասող մեկնաբանության վերաբերյալ.

2) բողոքարկվող դատական ակտում որեւէ նորմի մեկնաբանությունը հակասում է Վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը ՝ կցելով Վճռաբեկ դատարանի դատական ակտը եւ մեջբերելով դրա հակասող մասերը, կատարելով համեմատական վերլուծություն՝ բողոքարկվող դատական ակտի եւ նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործով Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատական ակտի միջեւ առկա հակասության վերաբերյալ.

3) բողոքարկվող դատական կատում դատարանի կիրառած նյութական կամ դատավարական իրավունքի նորմի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

2.3. Վճռաբեկ բողոքը սույն օրենսգրքի 414.2 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով ներկայացնելու դեպքում վճռաբեկ բողոքը բերած անձը վճռաբեկ բողոքում պետք է նշի այն նյութական կամ դատավարական նորմը, որը խախտվել է՝ հիմնավորելով, որ այդ խախտմամբ խաթարվել է արդարադատության բուն էությունը, ինչպես նաեւ՝ նոր կամ նոր երեւան եկած հանգամանքի առկայությունը:»:

Հոդված 12. Օրենսգրքի 414.2-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 414.2. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը

1. Վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի եւ այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար.

2) առերեւույթ առկա է մարդու իրավունքների եւ ազատությունների հիմնարար խախտում.

3) առկա է նոր կամ նոր երեւան եկած հանգամանք:

1) Սույն հոդվածի իմաստով՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի եւ այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, եթե՝

1) առնվազն մեկ այլ գործով ստորադաս դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտում միեւնույն նորմը կիրառվել է կամ չի կիրառվել հակասող մեկնաբանությամբ.

2) բողոքարկվող դատական ակտում որեւէ նորմի մեկնաբանությունը հակասում է Վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը.

3) դատարանի կիրառած նյութական կամ դատավարական իրավունքի նորմի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

2. Սույն հոդվածի իմաստով՝ առերեւույթ առկա է մարդու իրավունքների եւ ազատությունների հիմնարար խախտում, եթե՝

1) բողոքարկվող դատական ակտը կայացնելիս դատարանը թույլ է տվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը.

2) ~~առկա է նոր կամ նոր երեւան եկած հանգամանք:~~

Comment [cu4]: Գործող օրենսդրությամբ օրենքի միատեսակ կիրառության հիմքերի մեջ մտնում է նաև հակասությունը ՄԻԵԴ վճռում կամ ՍԴ որոշման մեջ տրված մեկնաբանությանը, արդյոք այս դրույթները հանվել են՝ ելնելով նրանից, որ այդ դեպքում բողոքարկման հիմքը իրավունքի զարգացման անհրաժեշտությունն է, իհարկե լիակատար հավասարության նշան չի կարող դրվել

Formatted: Font: Arial Unicode, Armenian

Formatted: Font: Arial Unicode, Armenian

Comment [cu5]: Հիմնարար խախտումը և նոր կամ նոր երևան եկած հանգամանքները բոլորովի տարբեր հիմքեր են, և օրինակ ՍԴ որոշումը, որ կկիրառված նորմը հակասահմանադրական է, չի նշանակում, որ դատավորը , որը կիրառել է այդ նորմը, հիմնարար խախտում է թույլ տվել

3. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով՝ դատական սխալ են համարվում սույն օրենսգրքի 395-րդ հոդվածով նախատեսված դեպքերը:

4. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին Վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում՝ գործը Վճռաբեկ դատարանում ստանալու օրվանից երեք ամսվա ընթացքում:

5. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին Վճռաբեկ դատարանի որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է եւ ենթակա չէ բողոքարկման: Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումն ուղարկվում է դատավարության մասնակիցներին (բացառությամբ քննիչի եւ հետաքննության մարմնի) այն կայացնելու պահից երկշաբաթյա ժամկետում:»:

Հոդված 13. Օրենսգրքի 414.3-րդ հոդվածի 2-րդ մասում «1-4-րդ» բառերը փոխարինել «1-ին եւ 2-րդ» բառերով:

Հոդված 14. Օրենսգրքի 426[4] -րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2) Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը.».

2) 2.1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Բարձրագույն դատական խորհուրդն ընդունել է որոշում, որով տվյալ դատական ակտը կայացրած դատավորը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ տվյալ գործով արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական նորմի ակնհայտ եւ կոպիտ խախտման համար.»:

Հոդված 15. Եզրափակիչ դրույթներ

1) Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը, բացառությամբ սույն օրենքի 7-րդ հոդվածի:

2) Սույն օրենքի 7-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

2018 թվականի փետրվարի 7-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքը (այսուհետ՝ Դատական օրենսգիրք), որն ամբողջությամբ ուժի մեջ է մտնելու նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրվանից:

Հարկ է նշել, որ Դատական օրենսգրքով դատական վարույթի հրապարակայնությանը, դատավարության լեզվին, դատական կազմին եւ որոշումների ընդունմանը, դատավորի ինքնաբացարկի հիմքերին, Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերին վերաբերող եւ այլ հարցերում որդեգրվել են նոր

Comment [cu6]: Չափազանց լայն շրջանակ, քանի որ վկայակոչված նորմը սահմանում է վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտի բեկանման հիմքերը, որոնք ընդգրկում են դատական սխալի հնարավոր բոլոր դեպքերը. . . . իբրև ուղենիշ կարող են ծառայել նոր օրենսգրքի նախագծով սահմանված լուրջ դատական սխալի դեպքերը որոնք հետեւյալն են՝
հետևյալները՝
1) քրեական դատավարության դրացքառող հանգամանքի այլ ուսքայանանները
քրեական դատավարության դեղիմաղարեցյանմամ
արդարացնող ատավճռի կայացվել
2) մեղադրյալի քննվելիս խալ
իրավակարգանահատական
3) մեղադրյալ կալանքի ամշբան ակէմ գրալան
վերագրվող ագործ հանցանքն
օրենքով նախատեսված ժատեսակ
պատժաչափման կատմամբ
նշանակված ի ժամանակ հաշվարկվել
4) թունդ ուժգրվելերեն քրոսի մանված՝
դատակաանակտանվերաքննանման
հիմքառայ գրդրե ադատավարականքի
որկվախտոում

Comment [cu7]: ուրթական կամ դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտման հիմքով դատավորին կարգապահական պատասխա- նատվության ենթարկելու՝ ՀՀ արդարադատության խորհրդին վերա- պահված իրավասությունն իրացնել միայն այն դեպքում, երբ խախտ-ման այդ փաստը հաստատվել է վերադաս դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով և հանգեցրել անօրինական ակտի բեկան- մանը կամ փոփոխմանը, ճիշտ չէ Արդարադատության խորհրդի որոշումը դասել նոր հանգամանքներով բացառիկ վերանայ- ման հիմքեր հանդիսացող այնպիսի մարմինների որոշումների շար-քին, ինչպիսիք են Մարդու իրավունքների եվրոպական դատարանը և ՀՀ Սահմանադրական դատարանը, քանի որ հակառակ պարագայում նույնացվում են ԱԽ-ի և նշված մարմինների կայացրած որոշումների իրավական արժեքը, դերը և նշանակությունը, տացվում է, որ Արդարադատութ- յան խորհուրդը, վերածվելով արդարադատություն իրականացնող մարմնի, հանդես է գալիս որպես դատական համակարգի «չորրորդ ատյան», ինչն անընդունելի է

մոտեցումներ, որոնք տարբերվում են քրեական եւ վարչական դատավարություններում գործող կարգավորումներից:

Վերոշարադրյալը վկայում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության եւ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքերը Դատական օրենսգրքին համապատասխանեցնելու անհրաժեշտության մասին:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» եւ «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերով՝

1) հստակեցվել են դատական վարույթի հրապարակության վերաբերյալ իրավակարգավորումները, այդ թվում՝ սահմանվել են եզրափակիչ դատական ակտերի՝ դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարկելու վերաբերյալ դրույթներ,

2) ամրագրվել են դատավարության լեզվին չտիրապետող վարույթի մասնակիցների՝ թարգմանչի ծառայություններից օգտվելու, փաստաթղթերը դատավարության լեզվին համապատասխան ներկայացվելու եւ դատավարության լեզվի սկզբունքից բխող նոր պահանջներ,

3) վերանայվել են դատարանի կազմին եւ կոլեգիալ կազմով որոշումներ ընդունելու կարգին վերաբերող դրույթները, ինչպես նաեւ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը,

4) նախատեսվել է, որ դատավորի ինքնաբացարկի հիմքերը սահմանված են միայն «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով, իսկ ընթացակարգը կարգավորվում է դատավարական օրենքներով:

3. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները եւ անձինք

Նախագծերը մշակվել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից:

Նախագծերի մշակմանն օժանդակել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման եւ իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամը:

4. Ակնկալվող արդյունքը

Նախագծերի ընդունման արդյունքում Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության եւ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքերը կհամապատասխանեցվեն «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքին:

ՏԵՂԵԿԱՆՔ

««Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» եւ «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

Օրենքների նախագծերի փաթեթի ընդունումն այլ օրենքների ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատա-ռելու մասին» եւ «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի ընդունման առնչությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների էական նվազեցման կամ ծախսերի ավելացման մասին

««Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատա-ռելու մասին» եւ «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի ընդունման կապակցությամբ ՀՀ պետական բյուջեի եկամուտների էական նվազեցում կամ ծախսերի ավելացում չի նախատեսվում:

Տեղեկանք գործող օրենքների փոփոխվող հոդվածների վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն Արա Բաբլոյանին

Հարգելի պարոն Բաբլոյանին

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ եւ 73-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը Ազգային ժողով է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 181 -Ա որոշմամբ անհետաձգելի համարված ««Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատա-ռելու մասին» եւ «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթ: Օրենքների նախագծերի փաթեթին կից ներկայացվում են օրենքների ընդունման հիմնավորումը, օրենքների ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտության բացակայության եւ գործող օրենքների փոփոխվող հոդվածների մասին տեղեկանքները, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների էական նվազեցման կամ ծախսերի ավելացման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը, ինչպես նաեւ օրենսդրական նախաձեռնության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 181 - Ա որոշումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, նշված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հիմնական զեկուցող) է նշանակվել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանը:

Հարգանքով՝ ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Դեպի վեր